ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» օգոստոս 2013 թ. N 66

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի օգոստոսի 9-ի N328 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղական համայնքի գյուղապետարանում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Հովհաննիսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Գ. Հովհաննիսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ս. Ծաղոյանին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (պետի պաշտոնակատար Հ. Հարությունյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա. Ղուկասյանին:
1. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի օգոստոսի 14-ի
N 66 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Հովհաննիսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ.

Անդամներ՝

Հ. Ալեքսանյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Լ. Հարությունյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.

Ա. Պողոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Խաչատրյան.

Ընդունող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Մ. Մելիքյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***